

Պատուհասիչ ու ահե՛ղ, այլ եւ ժայտուն ու բարի՛,
Իրաւարար վառէ հո՛ւրն ստեղծումի, պայքարի .
Տուր արեւէն մեզի շող, շանթերէն՝ շեղր ու սուսե՛ր,
Եւ ամպերէն ալ ստուեր :

ՏԱՂ ՎԱՍՆ ՀՕՏԻՆ ԽՈՒՃԱՊԱՀԱՐ

Սնանական արհաւիրք մը, որպէս հոգմ յարանուն,
— Յայասած հողի՞ն ընդերքէն, քէ երկինքէն հոսած վար —
Կը բարբալտ օդին մէջ, կը սողոսկի տունէ տուն,
Ու բոյլ սիրտերը դողով կը համակէ՛ գաղտնաբար :

Ոչխարներու, արջառի՛ նախիր մ'ինչպէս անհովիւ,
Որ դրդիւնն է լսեա երկրաշարժի մը հեռու,
Անխարխախ Հայը նորէն — հագար անգամ հողմացրիւ—,
Կ'ուղղէ աչքերն այսահար՝ կայքերուն նո՛ր արիերու :

Երկակործոյս, առխարխափ՝ կ'երբան փշուր առ փշուր —
Ամբիկա, Գանասա, Արժանդինա, Պրագիլ,
Մինչեւ երկիրը Հրոյ ու կղզիները քափուր,—
Վաղն իբրեւ ասի մը փռոյ՛ օտար հողին խառնուիլ :

Օ՛ր, յիմար վազքն այդ տխուր... ո՞ր երազին ետեւէն,
Անդաւանան ո՞ր յոյսին՝ որ խոստանար իրենց գանձ...
Հայ երազն ո՞ւր է ծաղկեր պանդխտութեան արեւէն,
Սիրոյ ոսկին պեղեր ո՞վ՛ օտար սիրտէն անթափանց :

Կ'երբան անխիւղ, անարցունք... ու կը տանին իրենց հետ
Ընձիւղներ նո՛ր դեռ ծլած եւ ընձիւղներն ալ վաղուան,
Որ կրնային խորարմատ դառնալ ծառեր ծաղկաւէտ
Ու պարտէզին հայրենի տալ պտուղներ հոտեան :

Կ'երբան անդարձ, անգիտակ՝ մասնիկներն այդ կայծակիր,
Կարծես վրբած իմ սրտէս ու մեծ սիրտէ՛ն Հայութեան...
Կը զգամ այժմէն, կը տեսնե՛մ — կ'ըլլան կայծերն հին մոխիր,
Մինչ կրնային դառնալ լոյս՝ երդիքին տակ Նայիրեան :

Շարժն է միտքի՛, ոչ հողի, շարժն՝ արքնութեան, ընդհանո՛ւր .
Կը ծաւալի հուրն անոր հեռատանէ հեռատան...
Կ'էպի արիեր մշուշատ՝ փախուստն ի գար է, ի գո՛ւր .
Հայրենի հո՛ղն է հայուն միակ աննե՛նգ ապաստան :

Ա՛հ, կ'ուզէի, կ'ուզէի՛, որպէս բազուկ մը հոգր,
Ելլել հօտին դէմ խելառ ու շարժումով մ'ամենի՛
Համախմբել շուքին տակ, պահել ամբողջ, անմոլո՛ր,
Մինչեւ հնչէր ծագէ ծագ՝ փրկարար կոչն հայրենի :

ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ